




ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ԴՐՐԻՆԵԱՆ — ԳԱՀԻՆԵ

## “ՓԻՒՆԻԿ”Ի ԾՐԱԳԻՐԸ


ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսը երկու անգամ, ամեն ամսոյ էին եւ 15ին

- 1.. Տոնօտոյն կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցն վրայ լուրջ ուսումնասիրութիւններ, Հայոց զաղրային հոսանքին վրայ ժամեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր զաղրականութեանց:
- 2 .. Արձակ եւ ոտաւար բանասեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
- 3 .. Գիտական հարութիւններ, կէսժամօր ժողովրդոց կեանքէն ու բարքէն մանրամասնութիւններ, հաշակաւոր երկրախոյզներու երկերէն բաղուած:
- 4 .. Եգիպտական հնութեանց ու հարութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեղեկութիւններ:
- 5 .. Կիսա խեղ ընդհ. բազմական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
- 6 .. Արտասահմանի եւ զուտաւայսն բղբալցութիւններ:




### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար . . . . .	Տարեկան . . . . .	Փր. 10
» » . . . . .	Վեցամսեայ . . . . .	» 6
Արտասահմանի համար . . . . .	Տարեկան . . . . .	» 13
» » . . . . .	Վեցամսեայ . . . . .	» 7
Կովկասի համար . . . . .	Տարեկան . . . . .	լուր. 5



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային հոգեբանութիւն. — Ս. Ճ.	Ապրիլ 1ը. — Ս. Օ.
Մեակնկալը. — Ս. ԲԻՒՐԱՍ	Ձիւմա. — ԴԻՄԱԿ
Եգիպտախօսական:	Փշրանք:
Օրօրոցը. — Գ. Օ.	Վանայ սովխալները:
Նորակալանի մը Յուշատարը. ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ	Չանազան լուրեր:



Չհոսողները եւ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր: Կամակ, յօգուած եւ բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻՒՐԱՍ

Direction de la Revue Arménienne PHÉNIX  
INSTITUTION CENTRALE  
LE CAIRE.



ԵԳԻՊՏՈՍ  
Ֆր.  
ՏՄՐԵՊՈՆ . . . . . 10  
ՎԵՅԱՄՍԵԱՅ . . . . . 6

ԲԱԺՆԵԳԻՆՆ  
ՎՈՆՆԵԿ Է



# ՓԻԻՆՏԻԿ



ԱՐՏԱՍԱԶՄԱՆ  
Ֆր.  
ՏՄՐԵՊՈՆ . . . . . 13  
ՎԵՅԱՄՍԵԱՅ . . . . . 7

ԿՈՎԿԱՍ  
ՏՄՐԵՊՈՆ . . . . . 5



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ    Հ Ա Ն Գ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ

15 ԱՊՐԻԼ 1899

ԹԻԻ 2.

## ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Ոչինչ աւելի անմատոյց է քան ճշմարտութիւնը քաղաքականութեան մէջ: Իր աստիճանները սերտորէն սրտչուած են կառավարական ձեւին բնութեանէն:

Աշատութիւնը լուսաւոր է, բըռնազետութիւնը աղճամբղին է և, իրերու արդի գրութիւնը ամբողջական իրականացումը չէ այն բնական խտէպին, որ ոչ միայն մարդկային էութեան, այլ բնութեան իսկ կեանքի սկզբունքը կը կազմէ, և, որ, ուրիշ բան չէ եթէ ոչ անգիմադրելի ճրգտում մը բարոյական ուժերու՝ անյեղի և ընդհանուր օրէնքներու համաձայն զարգացումի:

Անշուշտ, փորձառուներու համար կարելի է, որոշ չափով մը ամբողջապէս

աշատական կառավարութեանց — և ի՛նչ քիչ են ասոնք, — ուղեգծին ընդհանուր ուղղութեան: Վարժուած ազգին համար կառավարական երանգները կրնան մասնել հիմնական ծրագիրներու մեծ գիծերը: Անգլիոյ քաղաքականութիւնը զոր օրինակ բազմաթիւ գաղանիքներ չ'ունի: Արտհետեւ, հոն, օրէնքներուն աղբիւրը, ժողովրդին կամքն է. կառավարութիւնը պարտաւոր է, անմիջական տապալման երկիւղին տակ, հաշիւ տալ իր բոլոր արարքներուն նկատմամբ անոնց որոնք կը ներկայացնեն երկրին այլազան կարգի շահերը և որոնք հակադիւրի գերը կը կատարեն: Պարտի պարզել իր ուղեգիծը, ծրագիրները զոր անի

թաքուն, գոհացում տալ յաճախ ան-  
խորհուրդ այլ անշուսպ հետաքր-  
քրութեանց :

Այս ձեւը, իրաւ է, մեծ անյար-  
մարութիւններ ունի որոնց նուազա-  
զոյնը չէ հարցապնդումի սովորու-  
թիւնը : Ազատ երկրի մը խորհրդա-  
րանական վիճաբանութիւնները, մա-  
մուլին տեղեկութիւնները կը գոհա-  
ցընեն ժողովրդին և միեւնոյն ատեն  
. . . ոչ բարեկամներու ալ հետաքր-  
քրութիւնը : Այս անյարմարութիւն  
կը գաւազանուի յաճախ, ինչպէս գի-  
տենք, ուրիշ անյարմարութեամբ մը.  
պէտք է, երբ գերագոյն շահը կը  
հրամայէ, ուսել : Նմանն զնմանն  
բռնէ :

Բայց ի՞նչ ընել երբ խնդիրը բըր-  
նապետական կառավարութեան մը  
վրայ է — և ասոնք մեծամասնութիւն  
կը կազմեն : Ժողովուրդը զուրկ քաղա-  
քական անհատականութենէ, կը շար-  
ժի, իբր միակ կոյտ մը, այն ոլոր-  
տին մէջ զոր կը գծեն պարզ մահ-  
կանացուի մը, որ սակայն մարմնա-  
ցումն է բիրտ ուժին, բացարձակ  
կամքին անուորեղի հրամանները :  
Տգիտութեան և ստրկութեան մէջ  
թաղուած, ան պարզ ահանատես  
մը կամ հլու գործիք մըն է կառավա-  
րութեան բոլոր աշարքներուն : Վե-  
հապետ ազնուականութիւնը, ինչպէս  
Ռուսիա, իրեն օրինադիրք ունի մի-  
այն որոշ աւանդութիւններ և և են-  
թակայական ներշնչումներ. ինք պիտէ

թէ ինչ կուզէ. թէ ինչ պիտի ընէ.  
և աստիկա կը բաւէ :

Իրաւ է թէ, անոնց համար որոնք  
իրական և հաշուաբէպ գիտութիւնն  
ունին մարդկային բնութեան վարիչ  
օրէնքներուն, ստէպ լոյսի մէջ կը  
պարզուին բռնապետական հոգիներ-  
ու խորին ու մթին կարեղութիւն-  
ները : Մասնագէտին համար շատ  
գեթուար չէ, նախընթացներէն հետե-  
ցնել ճշմարտանմանութիւններ :

Բայց ո՞վ պիտի նախատեսէ և  
ի՞նչպէս այն գիտումները, այն նպա-  
տակները որոնք կ'ենան հոգիին  
անթափանցելի ալքերուն մէջ :

Ըսել է թէ անժանօթը լայն բաժին  
մը պիտի ունենայ միշտ : Արդ սաու-  
գութիւնը բացարձակ ծանօթն է :  
Սաուգութիւնը իրողութեան մը բոլոր  
կազմիչ տարրերուն լուսաւոր ու ջինջ  
յայտնութիւնն է :

Ինչ հիւանդ երազ ուրիմն զուտ  
ճշմարտութիւնը քաղաքական մեկ-  
նաբանութեանց մէջ : Տարակոյտը  
միշտ պիտի ծածանի մեր գատա-  
տաններուն վրայ. վերապահութեան  
ստուերը պիտի աժգունէ մեր կար-  
ծիքները : Մեթագորութիւններ միայն  
կարելի է ընել, և պատմական  
նախորդներու վրայ հիմնուելու պայ-  
մանաւ. որովհետեւ երեւակայու-  
թիւնը անսանձ է իր յղացումներուն  
մէջ : Հաւանականութեանց միայն կա-  
րելի է յանդիլ. և ժխտական ու  
գրական բոլոր տարրերը ներկայ

ունենալու պայմանս. որովհետեւ եզրակացութիւնը կախում ունի սարքերուն թուական յարաբերութենէն :

Գանք հիմա մեր սահմային հարցին :

Ինչպէս կը վարուին մեր գրողները որոնք հայկական հարցով կը զբաղին : Ինչ պատգամն'ը, ինչ վճիռներ ժամանակէ մ'ի վեր. և մասնաւոր ինչ ինքնավտահաւթիւն. ինչ յանդգնութիւն : Աստեք, կա'մ լաւատես են և բացարձակօրէն. կա'մ յուռեստ և ինչ անհաշուութեամբ : Ամէն բան դէշ է : Ռուսիան որոշած է հայերը ջնջելու քաղաքականութիւնը մինչեւ ծայրը տանիլ : Ամէն բան լաւ է. Անգլիոյ գիւտնագիտութիւնը վերջապէս համաձայնութեան մը պիտի յանդի Ռուսիոյ հետ հայոց ըզմանքներուն մասնակի գոհացում մը տալու համար : Միջին եզր չի կայ : Ասիկա կը նշանակէ թէ երկու կողմերն ծայրայեղութիւններ կը ներկայացուին, չտիր իր ո'չ մէկ կողմնակիցը ունի :

Եւ սակայն յուռեստներուն — շընորհ ընելով իրենց ոչ այս տրամադրութիւնը վատառող խառնուածքի արդիւնք չէ, այլ անժխտելի գէպքերէ բխած մտաւորական պայծառ վիճակ — կարելի է ընդգիմագրել, թէպէտ սակաւութիւ, իրական նը-

շաններ կամ նոյն իսկ իրողութիւններ Ռուսիոյ կողմէն, հայոց համար նըպատուօր. նմանապէս, լաւատեսներուն — միեւնոյն կենթագրութիւնը ասոնց համար ալ — ընդգիմագրել աննպատ — և պէտք է խոստովանիլ բաղնիքի — արարքներ : Պէտք է հաշուի մէջ առնել նաեւ — ինչ որ միշտ կարելի չէ — այն իրողութիւնները որոնցմով ապագան յղի է, որոնք ներկային մէջ բացակայ են, որոնք գեռ պիտի ստեղծուին և կրնան հիմնովին փոխել մեր արդի գաղափարներուն հանդամանքը :

Ուրեմն ինչ պէտք է ընել : Գարմանը ըսի արդէն, լեւելայն : Գիտակցապէս տարակուսիլ կարծիք մը կազմելէ առաջ : Որոշել յոտակօրէն իրականութեան սահմանը. հուռքել բոլոր սարքերը՝ խմբել բոլոր իրողութիւնները որոնք ամբողջ մը կը կազմեն, ճշդ եւ իրողութեանց բարոյական արժէքը : Գաղափարել զանոնք. սեւեռել անհրաժեշտ կապակցութիւնները : Եւ այսպէս իրականութեան վերլուծումէն բարձրանալ ընդհանուր օրէնքներու գիտակցութեան որուն ճարտար կիրառութիւնն է որ պիտի լրացնէ անհատապէս մեզի պակասող փորձառութիւնը :

Ա. Ճ.

## ԱՆԱԿՆԿԱԼԸ

Երեկոյ է . բսճներներ կ'երկարին ,  
Արեւմուտք կարմիր լեռներ կը վառին .  
Մառին վերայ որ ցցուած է խցկիս դեմ ,  
Ճննդուկներու տարմը կռուտ կը գիտնմ :

Ճլուրջին մ'է խըլացընող ու խառնակ ,  
Որ կը բռնէ բանք բոլոր ընդարձակ .  
Կոխեց մութքը , լրուեց աղմուկն ու ժըխոր ,  
Չար ճննդուկներն ընկղմեցան ի բուն խոր :

Գերեզմանի լրուսքին մ'է պատե շուրջ ,  
Երկնածովը խոր' կը շողայ , կապոյտ լուրջ .  
Բանսիս վերեւ բազմեր է բանձր խաւար ,  
Ո՛չ մի տեւել կանաչ ծառին չ'երեւար :

Քանի' գիտերն առաջանայ ցաւագին ,  
Այնքա՛ն խոկ ու հոգ կը սանջեն իմ հոգին .  
Մինչեւ որ բունն անոյժ փռէ աչքիս հոդ ,  
Միայն հոգիս քողած մութին մէջ հսկող :

Սակայն յանկարձ խարտափի պէս մի շունջ  
Ականջներուս զարկաւ , հագիւ առի շունջ .  
Ընդոտս էլայ , նայեցայ , կէս գիտեր էր .  
Լիր լուսին մը ծառին վերեւ կը ննջեր :

Սեւ սաղարթները սարսուացին , ըսպիսակ  
Կերպարան մը կը բաւարէ . թելին սակ  
Չեմ գիտեր ի՛նչ էր , ողբածայն կը ճըչէր .  
Մութերուն մէջ բան մը կանցներ , յայտնի չէր :

Գարձուցի աչքս , ի՞նչ կը տեսնեմ ո՛վ Աստուած  
Ահագին բուն որմին վերեւ էր կեցած .  
Առաւօտուն իջայ , որմին բսորոտ ,  
Տեսայ հոս հոն ցիր փետրիկներ արիւնտ . . . :

Ճննդուկ մ'էր այն կռուտ , կերգէր երեկոյն ,  
Բուն իր մագրաց մէջ ձգած էր զայն իսկոյն .  
Թռուա՛ն թռչնիկ , ննացար կուտս երջանիկ ,  
Անակնկալն ըզբեց նետեց մահուն գիրկ :

II. ԲԻԻՐԱՏ

## ԵԳԻՊՏԱԽՕՍԱԿԱՆ

ՔԱՐՆԱՔԻ ՏԱՂԱՐԲ (Շարունակությունն եւ վերջ).

Մինչև 1895 տաճարին երկու երրորդ մասը թաղուած էր՝ դարերու եւ մարդոց ձեռամբ դիզուած փլատակներու լեռնակի մը ներքեւ :

Նոյն ինքն Մարիէթ, հանձարեց նսագէտը որ Սէրաբէտը գտաւ, չ'էր հաւատար տաճարը կորուստէ փրկելու կարելիութիւնն : « Քարնաքի տաճարը, կր գրէ Մարիէթ, ամեն տաճարներէ աւելի կրած է ժամանակի հարուածները՝ զայն շինողներու անհոգութեան ու մանասանոց նկատի նկատմամբ անոր յարաբերական զիրքին պատճառաւ : Քանի որ համանման պատճառներ հաճանման արդիւնք կ'աշտապեն, կարելի է գտ շակել այն ժամանակը ուր՝ պարբերական վլուզումներով վերջին ճնշումի մը տակ տեղի տուած են հիմունքը այն սիներուն որոնց վրայ կը բարձրանար Սինազարդ սանչիկի սրահը եւ որոնք երեք չորրորդ մասամբ արդէն մաշած են, եւ այսպէս ինքն իր վրայ ինկած կործանած է սրահը, ինչպէս կործանած են արեւմտեան մեծ գաւթին սիները » :

Երեք տարուան մէջ եւ շատ դիւրին միջոցներով Պ. Ժ. Լըկրէն յաջողեցաւ փլատակներու տակէն գուրս հանել արեւմտեան մեծ գաւթը եւ Ռամսէս Գ.ի տաճարը, բարձրացոյց եւ իրենց տեղերը զետեղեց այս վերջնոյն վիթխարի սրճանները, գտաւ ու նորոգեց Թուֆմէս Գ.ի պալատը, հռչակաւոր ձեռնէին եւ բուսաբանական պարտէզ կոչուած սրահը (Թուֆմէսի Սուրիայէն բերած կենդանիներն ու բոյսերը հաւատարմաբար ներկայոց մեհենադրոշմներ). վերջապէս ի լոյս բերաւ խոյսազրուի սփինքսներու փառաւոր շարք մը որու ծայրը կը յանգի հինաւուրց քարափի մը :

Սինազարդ սրահի կեդրոնն եւս երկուան հանելէ յետոյ, Պ. Լըկրէն նրա ձեռնարկած է ամբողջութիւն նորոգելու անոր 134 սիները որոնցմէ ոմանք 23 մէթր բարձրութիւն ունին՝ 2.20 մէթր արամագծով, եւ ոմանք 18 մէթր՝ 2.60 մէթր արամագծով : Այս սիներէն մին, որ ծանօթ է հակելալ սիւն անուամբ, մտապուտ կործանում մը կ'սպասնայ եւ իր անկումէն կր վախոյուէր որ ամբողջ սրահին գոյութիւնը կը վտանգուի Պ. Լըկրէն՝ քաջ արուեստագէտի յատուկ միջոցներով յաջողեցաւ մաս առ մաս վար առնել անոր խոյսակները եւ գոնարան մասերը որոնց մէջ մինչև 26000 քիլոկրամ ծանրութիւն ունեցող կոտորներ կը գտնուին : Եօթը հարիւր ֆէլլահներ կ'աշխատին Պ. Լըկրէնի հսկողութեան տակ : Կ'ենթադրուի թէ Սինազարդ սրահի ամբողջական նորոգութիւնը 125.000 ֆրանք պիտի արժէ, իսկ ամբողջ տաճարին նորոգութիւնը պիտի աւարտի գրեթէ տասը տարիէն :

Թէև արդի Եգիպտոսը ֆրանսական սոցիցիոթեան շրջանակէն գուրս կը գտնուի, սակայն նախկին Եգիպտոսը կը մնայ եւ պիտի մնայ միշտ ֆրանսական, քանի որ ֆրանսացիք եղան որ ի լոյս բերին եւ ստացի կորուստէ մը փրկեցին անոր հնադարեան յիշատակարանները, որոնց աւերակները տակաւ պիտի անհետանային ժամանակի համայնածախ ազդեցութեան տակ : Եգիպտական արշաւանքէն ի վեր, ուր առաջին անգամ ծանօթացան անոնք աշխարհի, Շամբոլիօնի, Մարիէթի, Մասթարի եւ անոնց արժանաւոր յաջորդներուն կը պատկանի պատիւը բոլոր գիւտերուն եւ սրահպանութեան միջոցներուն :

Մինչև այսօր Քարնաքի տաճարին մեծագոյն թշնամին եղած է Նեղոս : 1887ի

մեծ ուղղուածը Յ մէթր ջրի տակ ծածկեց Սիւնազարդ սրահի սաւայտտակը: Սակայն նեղոսի պատճառամ սոյն միտար նոյնինքն Նոզոսի միջոցաւ կարելի եղաւ գարմանել իր ջուրերը՝ փոքրիկ ջրանոցի մը միջոցա-

շեղելով՝ եկան նորէն թրեցին սիւները եւ նախագումները, այսպէս լուծելով կրային խաւերը որոնք սկսած էին մաշեցնել զանոնք, հողին մակհաւասարութենէն սկսելով:

## ՕՐՕՐՈՅԸ

Այս վերնագիրը կը կրէ այն յոգուածը զոր Յրանսիսք Սարսէյ դրած է վերջերս Տիկին Քամիլ Բէրթի հրատարակած մէկ նոր վէպին առթիւ: Թէև աչքի առջև չ'ունինք այս վէպը, սակայն որս ամ առիտիումէ մը կարելի է հետեւցնել թէ՛ նեղինակը ծայրայեղ խոտութեամբ կը քննադատէ ամուսնութեամբ արգի եղանակը եւ իր վէպին գիցազնուհոյն բերանը կը դնէ անվերջ զանգամներ, առանց նկատի առնելու թէ՛ իր ջատագոված ազատ միութեամբ զուակաց ասպագան կը վտանգուի: « Բայց, կը գոչէ Տիկին Քամիլ, ինչ իրաւունքով կ'ուզուի միշտ այրն ու կինը ստորագասել մանուկին, ո՞ր արդարութեամբ կը պահանջուի չախանար, կազմակերպուած անհատականութիւնը, արժէքաւոր էակը ենթարկել սազմին, թրթուրին որ թերևս երբէք չ'պիտի գատգանայ: Ինչու համար երկու կաններ ստիպուած ըլլան խորտակել իրենց կեանքը, խեղդել իրենց ներշնչումները: կապուել կաշկանդուիլ անտանելի լուծի մը ներքեւ՝ միմիայն այն էակին համար որ իրենցմէ ծնաւ պիտի ածուի. . . »

Ինչպէս կ'երևի, հեղինակ ակիկներ՝ հակասակ իր սեռին փոխկութեան՝ իր մէջ կը կրէ տեսակ մը աննական բրտութիւն, չորցած տատած սիրտ մը որ թերևս երբէք մտտ գտած չ'են մայրական զգացում, զաւկի սէր, գորով կոչուած բաները: Յովսէօսն ու խիզախ իր գաղտփարներուն մէջ անսնարձակ կը կոխկռտէ

կ'անցնի ամուսնական ամեն սրբութիւն, ծնողական, որդիական զգացում ու սիրային կապեր, եւ կը պահանջէ որ այն վայրկենէն երբ կին մը դադրի այլ եւս սիրելէ իր ամուսինը եւ ճանձրանայ անկէ, ազատ ըլլայ առանց որ՝ եւ է խղճահարութեան, առանց ամենափոքր պատասխանատուութեան՝ թողուլ ամուսին, տուն տեղ, կրողին ու շուտիկին զրկել իր զուակները եւ առնել քաղել միանալու համար ուրիշ մը՝ որուն նա կզգայ թէ երանիկ պիտի ըլլայ:

Ետապրութիւնը ասկէ աւելի բիրտ, ասկէ աւելի վայրազ ձեւով մը չ'է ներկայացած, մանաւանդ կնոջ մը զրջին ու լեզուին տակ, զուրկ ազնիւ ու վե՛ ներշնչումներէ՝ կեանքի միակ նպատակ ճանչնալ անձնական հաճոյքը եւ անոր զոնկ ամենէն նախնական զգացումները: մարմնի նեշտանքը, միտի ըղձանքը սեննալ իրր գերագոյն իտէալ եւ անոր հատելու համար չ'արձամարձել ամենէն դայթակղական միջոցները, ասպրասան խեղճութեան մէջ փնտակ սրտի ու մտքի գոհունակութիւնը եւ երջանկութիւնը, ահա կեանքի բմբուսով իսկապէս պարտ վերիկ եղանակ մը որ՝ բարեբազդարտը՝ սահմանափակուած է միմիայն ազականած կեցրաններու մէջ ուր կ'սպասանայ քաղցկեղել բնկերութեան մեծագոյն մասը:

Բայց թողունք որ ինք Յրանսիսք Սարսէյ խօսի այն հանդարտ ու համոզիչ տնով որ իրեն յատուկ է:

« Տիկին Քամիլը եւ իրեն համակարծիքներ այն դազափարը ունին թէ՛ այր ու կին ամուսնութեան մէջ երջանկութենէ՛ զատ ուրիշ բան պէտք չ'է փնտնել, եւ թէ երջանկութիւնը կը կայանայ միայն եւ միայն սիրային միութեան մը ընձեռած վայելքներուն մէջ :

« Սահայն ամուսնութեան մէջ կայ ուրիշ տարր մը զոր պէտք չ'է արհամարհել. որովհետեւ միջակ ակզ մը չի գրաւեր այն՝ կեանքի մէջ. այս է պարսականութիւնը :

« Ա՛նպէս՛ էրկու էակներ որո՛ք իրարու կը միանան, ամբողջ կեանքերնին միութին անցնելու հեռադատելով, պակի վայրկեանին, պէտ ի պէտ ատամ պահուն իսկ կ'ունենան այն մտածումը թէ՛ այս նոր կեանքին լսխանգակ սուսպութեան մէջ իրարմով երջանիկ պիտի բլլան :

— Միբոլի փետա՛ս, կ'րտէ զսքանջը՝ արատաւը սչքերուն մէջ, երջանիկ բրէ աղջիկս :

— Միբախա՛ն աղջիկս, կ'բռէ կետորը, սպասո՛ւ եմ որ իմ գտաւիս յեղ հետ սչխարչիս է՛ն երջանիկ մարդը պիտի բլլայ :

— Ո՛հ, այս, կը պատասխանէ փետան :

— Ո՛հ, այս, կը պատասխանէ հարոր :

« Եւ ընդհանրապէս երկուքն ալ շատ անկեղծ են իրենց պատասխանին մէջ : Այս յանձնարարութիւնները լիովին կը համապատասխանեն իրենց ամենէն ջերմ փափագներուն, իրենց ամենէն գաղտնի յոյսերուն :

« Լիայոյս եւն որ երջանիկ պիտի բլլան, եւ կ'ամուսնանան երջանիկ բլլալու համար : Բայց երջանկութենէն զատ ուրիշ նպատակ մըն ալ ունին, այն է՝ ստեղծել իրենց համար բոյն մը եւ կազմել ընտանիք մը : Մանկան ծնունդը ամուսնութեան վախճանն է : Աւելին կայ. տարտամբէն կ'զգան անոնք թէ երջանկութիւնը՝ զոր վայելելու համար ձեռք ձեռքի տուին, այն ատեն միայն կատարեալ պիտի բլլայ՝ երբ ծնի այդ

մանուկը որ պիտի ամբազնոյէ իրենց միութիւնը : Կը խորտովանիմ որ երբեմն շատ տագնակալի կը դառնան մանուկները եւ վայրկեաններ կուզան որ մարդ հաճութեամբ կրողին կուտայ զանոնք : Բայց, ի՛նչ որ ալ բլլայ, քարձեալ մօրը համար ամենէն անուշիկ պիտի լինի, եւ հօրը համար՝ ամենէն մեծ ուրախութիւնը, ամենէն սիրալի հպարտութիւնը :

« Չիկայ աշխարհիս մէջ հաճոյք մը աւելի քաղցր քան այն՝ զոր կ'զգայ մարդ տեսնելով զուարթ ժպտար մանուկներու պարզամիտ ու չարածճի նայուածքին մէջ, լսելով անոնց պղտիկ սիրուն շաղակրատութիւնները ընտանեկան սեղանին վրայ : Բնութիւնը լազրանալով վերջապէս թէ՛ մանուկները ծանր բնութիւն են, հոգ տարած է թեթեւցնել զայն՝ ծնողաց որսին մէջ գրնելով մշտանորոգ ուրախութիւնը զաւակաց որոնք կ'ստին կը զարգանան հայրենի տան հովանիին ներքեւ :

« Պէտք է գիտնայ ճաշակել այդ ուրախութիւնը, եւ զմբաղղ են անոնք որ ինքզինքնին կը գրկեն անկէ եւ կամ կը ծաղրեն զայն : այսպիսիները սչ միայն անպաղքատելի ուրախութենէ մը կը գրկուին, այլ եւ, ինչ որ աւելի ծանր է, պարտաւորութիւն մը զանց կ'ընեն :

« Ամուսնացած ընտանիք մը հիմնելու հաւար, ինչպէս որ բոաւ իրենց՝ քաղաքային վարչութեան պաշտօնատարը, եւ ինչպէս որ քանոնան յիշեցուց իրենց, որոչապէս յանձնառու եղան որ՝ եթէ Աստուած իրենց զաւակ մը պարգեւէ, սիրին զանի ու մ. ծցնեն : Բացարտչ յանձնառութիւն մըն է այս՝ ընկերութեան եւ իրենց խղճին աւջեւ արտայայտուած :

« Մանուկը կը ծնի. իր առաջին ճիշդ մեծ պաշտաւորութեան մը գազափարը կ'արթնցի : Հայրը ու մայրը այլ եւս բացարձակ ազատութիւն չ'ունին ո՛չ իրենց սրտին եւ ո՛չ իրենց կեանքին վրայ : Փոքրիկ էակ մը կայ՝ իրենց մէջ ծնած՝ զոր

աշխարհը բերին իրենց կամքով եւ գործաշխարհը իրատեսք չ'ունին երեսի վայր թողելու եւ ոչ ալ անխոթ գանակուանոր նկատմամբ : Պարտաւորութի ն մըն է այս , եւ պէտք է լաւ բնութեւ այս բանին գորութիւնը :

— Բայց , կը գոչէ կինը , ա՛լ կարելի չէ համաձայնիլ էրկանս հետ . ան չի հասկնար իմ իղձերս . ա՛լ ուշագրութիւն ու ինձամ չի տանիր վրաս . երեսէ ձգած է զիս , այնպէս որ ես ալ կ'առիպուիմ սիրել ուրիշ մը՝ որուն հետ կ'ըզամ թէ աւելի երջանիկ պիտի ըլլամ :

— Կարելի է այդ , Տիկին , թերեւս քիչ մըն ալ չափազանցուած : Ամեն ջանք ի գործ գրծք միջնու աստիճան մը տանելի ընելու համար ձեր վրայ ծանրացող այդ կայութիւնը : Եթէ այս՝ ամուսնաբուծութենէ զատ ուրիշ միջոյ չի մնար ձեզ : Բայց այդ ծայրայեղս թեան զիմելէ առաջ՝ ժառանցեթ թէ ի՞նչ պիտի ըլլայ մանկան վիճակը՝ ի արմէ բաժնուած եւ զիրար ատու հօր ու մօր միջեւ : Չէ՞ք կրնար արդեօք այդ խեղճ պղտիկին համար՝ վշտի եւ ճանճբայթի քանի մը տարիներու գոճողութիւն ընել . զիտէք որ ժամանակով ամեն բան կարգի կը մանէ , եւ անգամ մը որ երկուստեք կիրքերը հանգարտին , ձեր ու ձեր ամուսնոյն միջեւ պիտի հաստատուի ընդունելի modus vivendi մը որու նախնիին ներքեւ պիտի մեծնայ մա՛սկը որ երջանիկ պիտի զգայ ինքզինքն ը՛ անանկսլ իր զլխուն վրայ միացած ձեր ձեռքերը : Եւ գուք ձեր մայրական պարտաւորութիւնը կատարած պիտի ըլլաք :

«Երբեմն ալ ամուսինն է որ գանդաւաներ ունի իր կնոջ ընթացքին դէմ եւ կը փախապի ժամ առաջ ազատուիլ սնդէ :

Բայց անոր ալ պէտք է ըսել նոյն բաները ինչ որ ըսուեցաւ կնոջ :

— Մտածէ՛ զաւելիք վրայ . քու ընտանեկան յարկը չի տար քեզ այն երջանկութիւնը զոր երազած էիր . ստուգիւցուալի բան է այս : Բայց վերջապէս , ամենէն զեղեցիկ ամառները խստուած են անձրեւով եւ արեւով . համբերէ՛ եւ սպասէ : Քու վարձատրութիւնդ պիտի ըլլայ տեւեղ զաւակներուդ երջանկութիւնը : Եւ յետոյ , պարտաւորութիւնն է այս :

«Եւ պէտք է կրկնենք , երեքնենք այս պարտաւորութիւն բառը :

«Մեր զաւակները մեզմէ չ'ինդրեցին որ լոյս աշխարհը բերենք զիրենք , մե՛նք ծնունդ տուինք իրենց եւ նոյն իսկ ա՛յս պատճառաւ պարտական ենք տանելի եւ քաղցր ընել իրենց՝ մեր տուած կեանքը :

— Սրբա՞ր է , կը հարչնէ սիկին Բէթթ , չափաճառ ստորագասիլ սաղմին :

«Ներեցէք Տիկին : սաղմը գոյութիւն չ'պիտի ու՛ննար՝ եթէ չափաճառ կեանք չ'տար անոր : Սաղմին պատասխանաւորութիւնը չափաճառին վրայ կը ծանրանայ , որովհետեւ իր գործն է այն :

«Սոր լեցուցէք ուրեմն ձեր չափաճառին որ գեւ իրեն անձանթ հեշտութիւն մը կայ , հեշտութիւններու ամենէն ազնիւր , այս է պարտքը կատարելու հեշտութիւնը :

«Այս օրուան վէտիբու եւ թափու գուժեանց զիւցազնեքը ստուած կ'ազգեն ինձի : Մարդու բախտակ կը ջանկութիւնը՝ գոճացում գամ տախանքին մէջ կը դնեն : Բայց ի սէր Աստուծոյ , միթէ երջանկութիւն մը չէ՞ իր զաւակաց համար աշխատիլ , յոգիլ եւ ինքզինքը զոճել :»

# ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒԾԱՏԵՏՐԸ

(Շար. Ա. րիտէն)

Արեւելքէն՝ սրածայր-եռանկիւնի լեռ մը, արեւմուտքէն՝ անտառաւէտ բլուրներու երկարաձգուած շարք մը, հիւսիսէն՝ ապառաժուտ, ցից և ամպերու մէջ կոշտուած սար մը, իսկ հարաւէն՝ ձորերէ կտրուած և լեռնակներէ կարկառուած, շեղ անթիւ գարեանոցներ . այս ամբողջը կը շրջապատէ աւան մը, հիւսիսի սարին ստքը, կողերուն վրայ նստած կարծր ժայռերուն, ու գէպի հարաւ կը նային, և ուրնոյ վրայ կարծես թէ շրջակայ բարձունք՝ պաշտօնն ստանձնած են յախտնական հոկոզութեան : Բերգաքաղաք մ'է այն, Միջնաբերդ ովն և տնի ձեւը Տէրրայի : Փոքրիկ վտակն արեւելեան սր ձմեռն հեղել կը գառնայ, և ամառը կը ցամքի . արեւմուտքէն աչ սառնապատ լեռներէ բխող և տակաւ անոց գետակը՝ աւանին երկու կողմէն քերելով կուգան իշալու կը խառնուին հարաւային եզերքը, ընդգրկելով գիւղաքաղաքը 1400 տներէ բաղկացեալ . ահա՛ Զեյթուն, իմ ծննդավայրը :

Հայրս, եօթանասունուչորս տարեկան արեւոր քահանայ մ'է, մանուկ հասակն ուսման նուիրած, այնպէս որ, այսօր, լուսավիտ և բանգէտ եկեղեցական մը կը նկատուի . հին

ու նոր հայերէնը լաւ գիտէ, քաջահմուտ է հայ եկեղեցւոյն հաւանդ կարգերուն և կանոններուն . իր գրասիրութեան կը պարտիմ ծննդեանս թուականը գտնելու գիւրութիւնը, շնորհիւ մագաղաթէ ձեռագիր աղօթագրքի մը, որուն վերջին թերթին վրայ ինք նշանակած է ինամուլ հետեւալը . «Յամին Փրկչի 1862ի, յամսեանն Մարտի, յաւուրն երրորդի, պարզ եկեցաւ մեզի Տեառնէ ուսուց մի, սոյ անուն կնքեցաւ . . . » :

Հետեւապէս, իշալունք ունիմ կոչուելու Զէյթունցի, ինչպէս կոչուած են հայրս ու մայրս, հաւերս ու մամերս, նախահայրերս ու նախամայրերս . եթէ գթբաղդութիւն մ'ունիմ՝ ցեղիս ստոյգ ազգագրութիւնը չ'ունենալու է . պատճառը, անբնական ու ցաւալի հակասութեամբ մը, հաւիս արաւասովոր ու սուսնատեցութիւնն եղած է . գըքերու և թղթերու երգութալ թշնամի հաւիս, ու շեռնակաւ շուսարոյն մը կրնար ըսուիլ :

Ինչպէս ըսի, հայրս ժամանակին մարդն էր, ունենալով հմուտեան մը պաշարը, զոր ժողոված է զստ ինքնօգնութեամբ . իր մանկութեան ժամանակ հասարակաց վարժարան չ'գտնուելով, ոտայնանկ վարպետի

մը քով յաճախած՝ և առաւօտէ  
ցերեկոյ ծնւագիր , առժանակիր  
կենցաղ մը վարած է : Այսպէս , շնոր-  
հիւ իր պարկեշտութեան և գործու-  
նեայ ծառայութեանց , բացառիկ  
պաշարայով մը , ձեռնադրուած է  
քահանայ , երբ հազիւ 21 տարե-  
կան էր :

Մայրս — որ իմ բանտարկու-  
թեանս վշտէն ինկած , մեռաւ այս  
տարի Յունիարին — կը պատմէր թէ՛  
1862ի Օգոստոսին , երբ Մարաշու  
կառաւարին Ալիգ փաշա , բազ-  
մաթիւ շեյխեզ գաղձականայ և ու-  
րիշ պաշարպոցոյ ասպատակայ բա-  
նակաւ մը Զէյթունի վրայ յաւձա-  
կ'ցաւ , եւ հնգամեայ ծծկեր մա-  
նուկ մ'էի . ինք , պատերազմի գնա-  
ցող հօշու և երէց եղբօրս Գէորգին  
ետեէն ստիպուած էր երթալ պաշար  
ու մթերք տանելու , յանկարծ ,  
ձայն մը կը լսուի թէ՛ առպատակ-  
ները կատարած , կը յառաջանան անար-  
շէլ դէպ ի Զէյթուն , աւեր ու  
քանդ ընելու տեղն , աւարելու բնա-  
կիչներն և բռնաբարելու կանայքն  
ու աղջիկները : Այս սև լուրը սար-  
սախ մը կը ձգէ քաղաքացոց վրայ .

կուսնք ու հաշտուք , պառաւանց  
աղեկաւոր ճիշերովն ու կանչիւննե-  
րովն հաւաքուած , կը դիմեն եկե-  
ղեցիները , կը փետն իրենց մազերը ,  
կուլան , կ'ողբան , կ'աղօթեն ու  
կ'աղերտեն որ այս պատուհասը չու-  
տով վերնայ . քիչ վերջ կեննեն խըմ-  
բովն Զէյթունի Միջնաբերդին դա-  
գաթն , որ շուրջ 70 մէթր խորու-  
թենէն գոտարով թառաղըր կը  
զտնուի լերկ ժայռերու : Այս անձ-  
կութեան մէջ էին , և ահա՛ տե-  
տաղելը կը հասնի , աղբարարելով  
թէ՛ լծհամի բանակը ցիր ու ցան  
եզա , և փաշան ալ լեղապատառ  
փոխու : Մտացոյ բսելու թէ՛ մայրս  
այդ շտապ տաղնապին , տարած  
թողած է զիս , մանուկ խանձարբա-  
պատ Զէյթունի գետակին հիսիս-  
արեւմտեան մէկ եզերքը , ճուղօճ  
կաշուած . երեկոյն վերայ առնալուն  
գտած է զիս այն տեղը , խոր քունի  
մէջ ընկզմած : Ս'վ երջանիկ ման-  
կութիւն , զերծ ամեն աղմուկից  
խուսութիւններէ . մանկիկ , զե-  
տափը ձգուած մինակ , կը քնանայի  
հանգարտիկ , մինչդեռ երկու ժամ  
հեռուն , մարդիկ զիրար կը ջարդէին :  
(Շարունակելի)

## ԱՊՐԻԼ 1 Ը

Քանի՛ քանի՛ յուսախորտութիւններ ու-  
նեյած չենք սասանորդի Ապրիլ Ան : Օր-  
նեայ բլրայ սահայն առ տարուան Ապրիլ  
1ը որ խաբար բլրպէ հետի՛ աւետարելը  
եզաւ մեզի , մանուկ Փրնիկի մաշխարհ  
գողաբ : Փրնիկ , խորհրդակիր անուն յո-

րում չ'եմ գիտեր ի՞նչ կայ չ'աշխարհի . զու-  
նորագիցիր սրտիս մէջ անոյշ տպաւորու-  
թիւնները յիշատակիլի օրուան մը :

Ասիկ իբր երկու տարի առաջ՝ Մախի  
երեկոյ մը , ի Քէրմա , երեկոյեան պաշ-  
տամուսնքս տալէ յետոյ նեղոս աստուծոյն ,

թեթեւ մարմնով, թեթեւ նորով փոռած էի գետեղրը թուրույիս տասջ՝ եղէգնահիւս փոխաթի մը վրայ : Ինչպէս իրիկուններն ամե ուրեք եզրագոտո՞ նոյնքան աւելի հոն յերեկուան՝ շաբին մէջ ջերմաչափի 48 աստիճանը բարձրացող անտանելի տաքութենէ վերջ՝ հիւսիսային քաղցրասիւք զեփեւան էր որ կը փչէր, այնքան կաղզուրիչ խեղճ օտարներուն համար՝ որքան կարելի է երազել : Բայց անհունապէս սխուր են զիշերները Սուտանին, լուսնի արծաթեայ շողջողումներն՝ արտասուքի կաթկիլումներ են կարծես, եւ երկինք ու երկիր համակուած են անպատի ամայի անշնչութիւնով : Քիչ մը հետուն՝ արեւմտեան զետարէն, նա՛նպիտական զարիւրէ ժառանգ թողուած ջրանիւներու քնայող ճոճոյք՝ գորտերու գերեզմանային կեղերջին հետ խառնուած, երազներով կ'օտորէին մելամաղձոս նոյնս այսքան վտեմ ու սխուր սեռայանի մառաջ, որ անգթօրէն կը զարթուցանէր յիս յիշատակները անցեալին, այն արիւնքաներկ հայրենիքին՝ ուր մանկութեան օրեր, նոյնաճեւ տանեաց վրայ զիշերելու անուշիկ սովորութիւնն ունէինք, լուսնի լուսով, ասօղբերը՝ համբելով, եւ կամ վնուկ պառաւի մը հաղարութէ կ'էքայէթներն երկիւղածութեամբ լսելով : Ողորմելի՛ իրա՛ւ պարզամիտ մանկութիւնն՝ որուն տեղ՝ հակառակ կեանքի բոլոր դասնութի ններուն, ինչպէս կ'ըսէ ֆրանսացի գրագէտ մը, չ'պիտի ուզէի այսօր փոխարինել զիտակից մարդկութիւնը :

Այս երազներովը սարու բերուած՝ յանկարծ սիրտաւոր մը լրագիր մը ներկայացուց ինձ : Փարոսն էր : Աչերուս չէի հաւատար. անհաւատայի բան, լրագիր մը Եզրագոտո՞ սը հազիւ թէ արեւ զուցած էր վաղամտիկ նեղսին ու վազաթարչամ Արմաւենիյն : Բայց երբ թովմաս աստրեայի թերահաւատութիւնն անցաւ, մեծ հաճոյք մ'ունեցայ որ այդքանը վայելելու փառքը պիտի ունենայինք. եւ բարի նախանձախնդրութիւն ու գրչի՛ թէպէտ ա-

ւա՛ղ միշտ գողգոջուն՝ լունաղբօսիկ մարմա՛յ մը, կէս անձանօթ երկրէ մը մէջ մա՛նաւանդ ուր՝ եթէ ապրէր ան եւ երբ պարտպաները թոյլատրէին՝ շատ բան կար գեւ զրելու, օգտակար եւ շանկա՛ն :

Սատուած երկար օրեր պարզեւէ Ռատամէսին. Փարոսին լոյսն ալ մարեցաւ եւ անոր տեղ՝ Փիւնիկ՝ արծիւի մը թռիչն առած՝ ճախրասլաց կը թռչի յայերս : Ու Գահիրէի հայր հետաքրքրութեամբ պիտի հետեւի անոր սաւաճումներուն :

— «Պիտի յաջողի՞ կ'ըսէ մէկ մը. — Ի՞նչպէս գտար դո՛ւ մանաւանդ գրասէր տղայ, կ'ըսէ ուրիշ մը յուստես փոխտով մը :

Վարդաղոյն, բարեկամ, այս է պատասխանս. պատկառելի թերթ մը՝ աւաջին թիւէն դատելով, խնամուած գրութիւն, հասարակ մանկանայուի գրչի տեղ՝ բանաստեղծի շունչ, շահախնդրութեան տեղ՝ օգտակար հանդիմանալու անկեղծ փափսք, եւ ա՛յ ի՞նչ կ'ուզես, եթէ ինչ շատ գրականութենէ հասկնող ես : Ի՛նչ որ բլլայ սակայն՝ հասկցողներու եւ չ'հասկցողներու տարբերութիւնը — յայտ'ի է որ արաջինք գժրաղբաբա՛շ չ'են կաղմեր մեծամասնութիւնը, անուբանայի է որ Փիւնիկ իր արդի փոքրածաւալ զիրքով ու կիսամտեայ հրատարակութեամբ միայն չ'զոհայներ ընթերցասէր հասարակութեան բաղմապահանջ պէտքը . կէտ մը զոր անշուշտ շատ զիւրիս բան է գարմանելը, եթէ միայն այսքան համեստ ձեռնարկ մ'ալ փոքրիկ զոնուութեամբ մը քաջալերել զիմանք :

Բայց քաջալերել զիմանք, հայե՛ր, սուրբ պարտականութիւն մ'է այս սրուն անգործագրութեան պատճառաւ արդէն շատ տուժած ենք ու գեւ պիտի սուժենք :

« Ռէքլամ մը, պիտի գոչէ խճրճոս պոտոտախօսը » : Ռէքլամ մը՝ բայց սրտ, համեստ մշակի՞ մը համար որ մէկէ աւելի պարագայներու մէջ զոյց ստած է իր անշահախնդիր ազգասիրութիւնը . ու մեր համակրանաց արժանի՛ իր անցեալը թ ու ներկայովը :

Ռէքլամէ մ'աւելի, անկեղծ կոչում մը թո՛ղ ըլլան այս սողերը մասնաւորապէս եգիպտացիական հայուն, եւ՝ աննշան լուծմայիս հետ՝ մաղթանք մը, որ այս բազմօգուտ ձեռնարկը լիութի աշակերտի,

իր բարենախանձ հետեւողներն ունենալով: Երկա՛ր կեանք չ'պիտի մաղթեմ քեզ Փիւնիկ, քեզ, որ Անմահութեան խորհրդանշանն ես: Դու՞ չ'ապրիս, վա՛հ, հազար ամօթ այն ատեն հայ Սփինքսին:

Գահիրէ, 1 Ապրիլ Ս. Յ.

## ՔՄԱՅԻՆ ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

### ՁԻԼՄԱ

Պատահած է ձեւ տեսնել դէմքը այնպիսի մաշուած մը որ՝ բազմին մէկ անակնկալ հաշուածս լ' մէկ օրուան մէջ կրակին կամ խաղին կուտայ իր ամբողջ հարստութիւնը եւ գլխիկը ու մտածկոտ, ձեռքը ծնօտին կը քալէ աննպատակ, ինքն իւր մէջ ամիստուած, առանց ամ ու ձախ նայելու: Դէմքի այս տիրաբոյր արտայայտութիւնը երեւակայի լէ յետոյ՝ տուէ՛ք նոյն այդ դէմքին բաւական խոշոր գլուխ մը նեղ ճակատ լ ու զոյգ մը լայն շի ախանձերով, սեւտիտ յնքերէ կամարուած յարաքթիթ երկու պղտիկ աչքեր, արծուեռունց մը, թանձրամիս ու լայնափեռեկ շրթունքներ՝ վերէն ու վարէն պերեւեջաններու ու մարտքի խառնամառն թաւուտքի մը մէջ անհետացած կիսովին, համաչափ անդամներ՝ ստորինները աւելի իշարու մասնաշարժ հակամէտ՝ մաշկակապներու յատուկ կազմութեամբ: Եւ գեղանի սեռին նախանձ աղբերու չափ մանրիկ ստնփոսներով. ահա՛ Ձիւնայի արտաքին պատկերը:

Մի կարծէք սակայն թէ դրչի մէկ հաշուածով կարելի է ուրուագծել նաև Ձիւնայի ներքինը եւ վերածել անոր հողերանական նկարագիրը: Գրեթէ առեղծուած մըն է ան որ կը խուստի է՛ն սրտոտես ու խորաթափանց աչքերէ եւ միտքերէ եւ շատ շատ ենթագորական միայն կրնան ըլլալ անոր նկարագրի խոշոր գիծերու մասին կազմուած կարծիքները:

Իւր առած կրթութիւնը եւ առօրեայ ընկերային շփումները ու յարաբերութիւնները չ'են կրցած ամբողջ այն տեսակ մը ընդարթօս վայելնութիւնը որ հասակին հետ ու ճացած՝ մենամոլ, այլամերժ, գրեթէ մարդատեսայ անհատականութիւն մը սուած է իրեն: Անապատականի մը չափ խոտամբեր ու ժուժկալ՝ անտարբեր ու արհամարհոտ աչքով մը կը նայի ամեն ընկերական երեւոյթներու, ազմուկի ու ժիւորի, խաղ ու ցնծումի, սրտնցմէ խոյս տալ իրեն սկզբունք ըրած է:

Շօքէնհարի չափ յոռետես ըստ երեւոյթին, կենցաղատէրներու ու

յափրացածներու ըմբռնանա՞ծ վա-  
յիւքներուն կարօտը կը քաշէ մե-  
կուսի ու տխրահառաչ, իբր մին  
այն տիպար ժլատներէն, որոնց վրայ  
կաղապարած է Մօլիէր իր Հարբակօնը:

Ձիւմա անզգայ չ'է սիրոյ և աւելի  
խանդավառ հասակին մէջ Աստղկան  
նետերէն խոցուած է իր սիրտը, որ  
հիմա աւերակ մըն է և պիտի մնայ՝  
ցորչափ իր մտասիպարը ապրի սի-  
րամերժ:

Ձիւմա անտաղիւտ է իբր աղգասէր  
ու կրթասէր և իբր այն միակ իտէալ  
մը ունի, այն է օր մը կրթական  
նախարարի կամ գտնէ խորհրդականի  
պաշտօնին բարձրանալ և մանկա-  
վարժական նորագիւտ մէթոտով  
օժտել վարժարանները և առաջին  
առթիւ բոլոր հինգ լուի վարժապետ-  
ներու օձիքէն բռնելով դուրս նետել  
կրթական յարկէն:

ԴԻՄԱԿ

### Փ Շ Ր Ա Ն Ք

Վտարանշող ժողովուրդը պէտք ունի  
մէկն ատելու:

ԼԱՄԱՐԹԻՆ

\* \*

Ակնարկութիւնները խօսակցութեան ա-  
նանուն նամակներն են:

ՏԻԿԻՆ ՏՐ ՌԷՄԻԻՉԱ

\* \*

Ի՞նչ բանի կը ծառայէ ազատութիւնը՝  
եթէ արդարութիւն չի բերեր:

ԿԱՍԹՕՆ ԲԱՌԻ

\* \*

Է՛ն ստորին ստախոտութիւնն այն է որ  
կը շինուի թունաւորուած ճշմարտու-  
թեամբ:

ՕԿԻԻՍԹԻՆ ՖԻԼՕՆ

\* \*

Յիմարամիաներէն ունեցած վախերնիս  
պէտք չէ արգիլէ մեզ խտտութեամբ խօ-  
սելէ այն բաներուն վրայ որ լուրջ են:

ՌԸՆԱՆ

Լաւագոյն վէպեր կ'ուզէք, աւելի մօ-  
տէն գիտեցէք պատմութիւնը:

ԿԻՉՈ

\* \*

Շատ անպուժ բան մըն է ճանչնալ իր  
թշուառութիւնն ու անկարող ըլլալ զայն  
զարմանելու:

ՀԱՆՐԻ ԿՐԷՎԻԼ

\* \*

Կիները սա՛ ունին զարմանալի որ կրնան  
ուզածնուն չափ, ուզածնուն պէս ևս ու-  
զած ձեռովնին խօսիլ:

ԼԱՔՕՐՏԷՌ

\* \*

Մատիտով գրել՝ ցած ձայնով խօսիլ է:  
ՏԻԿԻՆ ՍՌԻԷՉԻՆ

### ԱՆԱՍՈՒՆ ԵՒ ՄԱՐԴ

«Ո՛չ հրեշ: ահ, ո՛չ սնատուն»:

ԲԱՍՔՍԼ

Մարզն անբաններու հետ բազմաթիւն  
անգամ թերեւս զանի շողոքորթել է :

\* \*

Անասուններու խօսելու անկարողու-  
թիւնը սա առաւելութիւնն ունի որ անոնք  
չեն կրնար ստել :

\* \*

Բնութիւնը մարդկան եւ անասունին  
միջեւ հաստատած է այնպիսի սահմանա-  
գլուխ մը որմէ անդին չի կրնար անցնիլ  
բնազգը, մինչդեռ բանականութիւնը կը  
սիրէ անոր վրայէն ցատկել :

Անբանները կ'անձն ստրկն մարզն առակ-  
ներու կեղծիքին մէջ. մարդ անասունը  
կը ներկայացնէ կեանքի իրականութեան  
մէջ :

\* \*

Առիւծի մորթին տակ էչն ինքզինք կը  
մատնէ իր ականջներով, գառնուկի մորթին  
տակ՝ գայլն ու մարդը իրենց ականներով  
կը յայտնուին :

\* \*

Մարդու յատուկ գերազանցութիւնն այն  
է որ կրնայ ինքնիրեն իր թշուառութեան  
պատճառ ըլլալ :

## ՍՈՎ ԿԱՅ ՍՈՎ

Երէկ Ջարդ, այսօր Սով, վազն ալ ո՛վ  
դիտէ ի՛նչ պատուհաս պահուած կայ մեր  
ցեղին . ո՛րքան կ'ուրախանայինք թէ՛  
ընդհանուր կոտորածէն զերծ մնացած էր  
Վասպուրական, սիրտը հայութեան, նոյն-  
չափ ալ չե՛նք տիրիւր երբ կ'իմանանք թէ՛  
հոն սով կը սիրէ : Ջարդը մեզ կտակեց  
արդէն աամնակ հազարներով սրբեր,  
հաղարաւոր այրիներ, անպաշտպան ու  
անժառանգ . ասոնց հողը ծանրացած էր  
ամեն զգայուն ազգակիցներու, եւ աւելի  
օտարներու խղճին վրայ . սրբանոցներու  
թիւն օր օրի շատնալու վրայ էր ( թէեւ  
միւս կողմէն ալ կը փակուէին անոնք  
իւրաքանչեւ ), եւ կերպով մը թեթեւցած  
կը համարուէր այդ բնութիւնը . բայց, վերջին  
գէպերուն մէկ բնական հետեւանքով,  
վրայ կը հասնի սովը, մոխրացած գիւղերն  
ու քանդուած քաղաքները գերեզմանա-  
տան փոխելու : Տեսարանը նոյն է, միայն  
թէ՛ փոխանակ լոռութեան եւ անշարժու-  
թեան, նորածեւ կենդանութեան մը շար-  
ժուածը, խլրտոքն սկսած է հոն . Վան  
բովանդակ՝ մահամերձի գերագոյն վայր-

կեանք կ'անցընէ . շրջակայքը ձիւնը ծած-  
կած, գաշտերն ամայացած, ա՛լ յոյս չկայ  
եւ ո՛չ նշոյլ գոյութեան . ծերեր զառամ,  
մանուկներ մատաղ, սրբեր ու այրիներ,  
զալկապէ՛մ գիւղիներ, երեքսով կը պար-  
տին փողոցները, որոնք ազնաւաճառի  
երեւոյթ առած են . սոնմին յատուկ նկա-  
րագիրը, համեստութիւնն ու պարկեշտու-  
թիւնն, ա՛լ մի փնտտէք հոն . մերկ ու նոթի,  
հրապարակները կը թախառին . ո՛վ պիտի  
տայ անոնց հացը, կեանքի ս՛ ունիք . կը  
մսին, կը սառնն, ո՛չ փայտ կայ ոչ անուխ .  
ազէտը չէ՛ մասնաւոր այլ ընդհանուր :  
Մէկ օրինակ միայն կը բաւէ ազօտ գա-  
զափար մը տալու Վանայ կայութեան :  
Այլուօր գիւղէն, սովատանջ ընտանիք մը,  
քաղաքը կը տանի իր մէկ հասիկ զաւակը,  
մատղաշ տղեկ մը, ածուրդի կը հանէ, որ  
գոնէ մէկ երկու օրուան ապրուստ ճարէ :

Անգութ իրականութեան մ'առջեւ կը  
գանուինք . մեծ ու պզտիկ, վաճառական  
ու արհեստաւոր, հարուստ ու աղքատ,  
ամեն գառակարգ, բոլորիս պարտակա-  
նութիւնն է մասնակցիլ հա՛ պանակութեան

որ բացուած է՝ ի նպատակ մեր սովատանջ Վասպուրականից արևնակիցներուն. պէտք է օգնել, պէտք է մեր անձնական ծայրայեղ հաճոյքներուն չտի մը դնել եւ մեր առօրեայ ծախքերէն կարելի որ բաժին մը յատկացնել անոնց :

Ուրախ ենք որ Եգիպտահայք սկսած են արդեամբ ցոյց տալ իրենց համակրանքն ու արգահատանքը . բացուած ազգային հանդանակութիւնն ատուջ կ'երթայ, բաւական պատկառելի գումարներ ստորագրուած են արդէն Վսեմաշուք եւ Ազնուաշուք անձնաւորութիւններէ : Ո՛չ նուազ ուրախաթիթ է տեսնել օգնելու ետանդը սեղ ոչս 'այ գերաւանական խմբին մէջ որ ամսոյս Յին Կիրակի զիւնըը ներկայացուց Պէշիկիթաշլիանի Արշակ Բ. ողբերգութիւնն եւ գոյացած 1850 զրոշի ընդհանուր հասոյթէն՝ 450 զրոշը Վանայ սովելոց յատկացուց . այդ գումարն վրայ կարեւորներ ալ դնելով պիտի զրկուի Ազգ. Պատրիարքարան, Տիար Գ. Իսաղուլիանի ձեռքով . որ իր հայրենակիցներուն պատիւ կը բերէ իր անկեղծ եւ ուղղամիտ նկարագրովն ու մանաւանդ, իր անշահասէր գործունէութեամբը :

Ինչպէս բախնք, շարժումն ընդհանուր է Գահիրէի մէջ . այժմէն մեր խնդրակցու-

թեան հետ, յաջողութիւն կը մագթենք այն գովելի եւ օրինակելի ձեռնարկին, զոր մտադիր է մօտերս ի գործ դնել՝ տեղւոյս Ընթերցասիրաց ընկերութեան Գործ. մողովը . այն է չքեղ ներկայացուած մը տալ Օրէրայի թատրոնին մէջ եւրոպական խմբի մը ձեռքով, հասոյթը — որ անտարակոյս պատկառելի պիտի ըլլայ չնորհիւ նոյն ընկերութեան կարգադիր յանձնախմբի ձեռնհասութեան — Վանայ սովելոց յատկացնելու նախանձելի նպատակով : Այս առթիւ պարտք կ'զգանք հասարակութեան ուշադրութիւնը դարձնել հայ Գլխավի վրայ, որ վերջերս մանաւանդ ամեն քննադատութենէ վեր մատակարարութիւն մ'ունի, յարասեւութեան եւ բարգաւաճման պայմաններու մէջ :

Վերջաց կելով մեր յորդորը, կոչում կրնենք անոնց որ արգէն իրենց անձին վրայ փորձած են թշուառութիւնը, եւ անոնց՝ որ միշտ հետի ապրած են արիւնի եւ մոխիրի սահմաններէն. թո՛ղ սթովինն ու աչքերնին դարձնեն զէպի Վասպուրական, փոթան հասցընելու իւրօքանչիւր լուծման մեր ամենուն պաշտօնեալ Հալքիին ծննդավայրը, որ այսօր սովի ճիւղաններուն մասնուած յուսահատութեան ճիչեր կ'արձակէ : Խ.

## ՎՅՏԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկին ԶԱՐՈՒՀԻ Ռ.Յ.ՊԷՐՊԵՐԵԱՆԻ անտկնկալ մահուան գոյժը վերջերս հասաւ մեզ Պօլսոյ թերթերուն միջոցաւ. այս կորուստը խոր սուգով կը համակէ ո՛չ միայն Տիար Ռէզէս Բ. Պէրպէրէանն ու իր սիրատուն զաւակները, այլ եւ բոլոր անոնք որ մտէն կը ճանչէին սղբացեալին իբրև կին ու իբրև մայր բարոյսկանի չըք-

նազ նկարագրով օժտուած : Մեր խմբագիրը, մտերիմն ու համակրողը Պատկառելի գրագէտին ու վարժապետին, իր խորին վշտակցութիւնը կը փութայ հապորդել ու մագթել կորով ու համբերութիւն, որ տանի ա՛յսքան դառն կորստի մը կակիծը :  
ՕՐ. ՀԷՐՄԻՆԷ Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ ամսոյս Յին չորեքշաբթի իրիկուան ժամն

Յին կը թռի ծնողքին ծոցէն. Պէյ-  
լէրեան Գրախօսի անուշաբոյր վարդն  
էր այն ոչ թառամեցաւ հազիւ հինգ  
տարեկան, ծիծաղափթիթ հասակին  
մէջ : Մօտէն ծանօթ ըլլալով սոյն  
վազամեռիկի ծնողքին գորովական

ու ծնելատէր նկարագրին, խորապէս  
կ'զգանք մեծութիւնն իրենց սուգին  
զոր վարատելը գործ է ժամանակի.  
Խորին վշտակցութիւննիս սրգեկոյտյս  
ծնողքին :

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

— Թէհրանի բողոքական եւ վանի ու  
Քուրդզէլէնի պապական հայերը, նորէն  
Մայրենի եկեղեցոյն գիրկը դա՛ ձած են :

— Մաքեմ կ'իմացնէ թէ՛ Ուէսթմի-  
նիսթրի դուքսը նոր զիմում մ'ըրած է ի  
նպաստ հայ սրբերուն, որոնց որբանոց-  
ները, հակառակ Անկլո-ամերիկեան հովա-  
նաւորութեան ներքեւ գանուելնուն, փակ-  
ուած ու հրդեհուած են :

— Էլ Ռանա կը յայտարարէ . « Սիւրիա  
չ'է մոռցեր 1850ի կոտորածներն ի Բէրիա  
եւ ոչ ալ 1860ին գործուած դաղա՛ ու-  
թիւններն ի Դամասկոս եւ ի Լիբանան :  
Պուլկարները, կ'ըսէ նոյն թերթը, շատ  
լաւ գիտնն թէ՛ ի՛նչ բարիք կարելի է  
սպասել Թուրք կառավարութենէն, եւ  
միթէ վերջերս Հայաստանի մէջ քիւր-  
սերու սուրէն անցած 300,000 հայերու  
հոգիները վրէ՛ժ վրէ՛ժ չե՞ն աղաղակեր : »

— Բազմապէս շատ մը նշանաւոր խոս-  
ւացի գրագէտներու գաղափարը մէջ բե-  
րելով . կ'ըսէ թէ՛ Վիքթորիա Աղանուր  
հայ-խոսալացի կոմսուհին արդի Իտալիոյ  
առաջին բանաստեղծուհին կը նկատուի :

— Նոյն հանգէսը կը ծանուցանէ թէ՛  
Պ. Ա. Մանթաշօֆֆ հարուստ ազգասէրը  
եւրոպական համալսարաններուն մէջ 60  
հայ ուսանողներ կը պահէ, հոգալով անոնց  
մտունդի եւ կրթական բոլոր ծախքերը :


մինչեւ իրենց ուսումնառութեան չըջանին  
աւարտումը :

— Պ. Ա. Շահ Զատէ էլ Ռանա թերթին  
մէջ, հայկական հարցին նպաստաւոր եւ  
համակիր յօդուածներու շարք մը կը հրա-  
տարակէ « Դէպ ի Հայաստան » վերնա-  
գրին տակ :

— Պուլկարական Նով Օցիվ թերթը կը  
կայծէ գիտնալ թէ՛ Զարի զէնընկեցու-  
թեան առաջարկութիւնը քննելու համար  
յառաջիկայ մայիս 18ին ի Լահէյ գումար-  
ուելիք Վեհաժողովին մէջ պիտի կարգա-  
գրուի նաեւ մակեդոնական խնդիրը : Թէեւ  
Ժուռնալի գիւտնագէտ խմբագիրը Պ. Սէս-  
սի հետեւեալ շահեկան խորհրդածութիւն-  
ները կ'ընէ այս մասին . « Ըստ ամենայն  
հաւանականութեան Վեհաժողովին մէջ  
հռէտորական ծաղիկներով պիտի՞ զարդա-  
րեն զէնընկեցութեան ծրագիրը, եւ հրա-  
ւիրեալք մին քան միւսը աւելի խան-  
դալառութեամբ՝ պիտի ջատագովեն Ռու-  
սիոյ կայսեր մարդասիրութիւնը. սակայն,  
պիտի ուզե՞ն կամ կրնա՞ն ձեռք առնել  
ազգեցիկ միջոցներ գործադրելի ընելու  
համար խնդրոյ տակ եղած ծրագիրը : Կը  
կատկածիմ : Արեւելքը խաղաղացնելու  
համար եւրոպա պարտի բռնագաանկ Սուլ-  
թանը որ բարենորոգումներ իրագործէ  
Հայաստանի եւ Մակեդոնիոյ մէջ, եթէ  
Սուլթանը մերծէ, պիտի ուզուի՞ բանակ  
մը զրկել Թուրքիա եւ ի՞նչպէս Անկարելի  
չէ՛ այս, բայց քիչ հաւանական :

# ԹԷՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Փ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.



ՇԱՐԻՆԱՊՏԻԻԼ ԱԶԻՉ ԹԻԻ 48

Սոյն բարեհամբաւ վաճառատան շուրջ 20 տարուան գոյութիւնը Պօլսոյ մէջ, այս տարի ալ տեղս մասնաճիւղ մը բայցած ըլլալը՝ զօրաւոր ապացոյց մ'են իր ապրանաց ազնուութեան, զիններու չափաւորութեան եւ աւելին, յաճախորդաց գոհ մնալուն. աւելցնելով այս յատկութեանց վրայ Սէյլանէն, Ճալալէն, Չինաստանէն ու Հնդկաստանէն ընտիր ապրանքներ ուղղակի ներմուծելու առաւելութիւնը, այս կարեւոր հաստատութիւնը կարճ ժամանակի մէջ արժանացած է հանրային համակրանաց եւ պատիւ կը բերէ տեղւոյս ազգայնութեան:

Պատ. յաճախորդաց աւելի գոհացում տալու համար, վերջերս յատկապէս Լոնտոնէն բերել արուած են ընտիր թէյեր ամեն եղանակի մանաւանդ ամառուան համար:

Կ'ուզէ՞ք ստուգել ներկայ յայտարարութեան պարունակութիւնը, հաճեցէ՞ք անձամբ երթալ յիշեալ վաճառատունը, ուր իբրև փորձ՝ ձեր ներկայութեան կը պատրաստուի եւ կը մատուցուի մէկ, եթէ կուզէք երկու գաւաթ թէյ:

Սոյն վաճառատունը՝ Տիկին Աննա Ռաֆֆիի յանձնարարութեան վրայ ստանձնած է վաճառել Անմահ վրպատանին հայրենաշունչ երկերը. նոյնպէս, Ազգ. Հիւանդանոցի սիկարի թղթերն ընտիր տեսակէ:

# ԳԻՇԵՐԱՅԻՆ ԴԱՍԵՐ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՏՕՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Իրենց ապագան ապահովցնելու փափաքող հայ երիտասարդներուն յորդոր կը կարգացուի օգուտ քաղել առիթէն, շաբաթն երկու գիշեր միայն գալով Կեդր. Կրթարանն, ուր ամենապիւրին մէթօտով գործնական Տօնարակալութեան դասեր կուտայ հմուտ ու փորձ հաշուազէտ մը, խիստ գոհացուցիչ պայմաններով:

Գիմել ֆիլոսոֆի խմբագրատունը:

# ՏՕՐ. ԱՍՏԱՆԱՐՈՅԺ ԺՈՐԺ ԷՎԼԵԱՆ

Ապսին, Շարե Գուպրի Ն. 55

Կը պատրաստէ կեզմ ա՛յլուներ ամենափափուկ բերաններու եւ ամէն հասակի յարմար, ամբիկեան ամենալերլին դրութեամբ վայրկեանապէս կը դադրեցնէ ահաւոյի ցաւերը, նորագոյն մէթօտով կը լեցնէ փտած ախտաներ, ազնիւ ապրանքներով կատարելապէս կը բաժէ յինտերու եւ բերնի զանաւան հիւանդութիւններ: Իր լեցուցած ախտաներուն տուկունութիւնն առ նուպլի 2 տարի կ'երաշխաւորէ:



# ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ ԳԱՅԻՐԷԻ



Շարժ Մ Օհանէս Ալի Փի՛ն՛նիկի խմբագրատունը.

ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԷՆ

## ՄԱՐԱՏ ԲԻՒՐԱՏ

Կ'աւանդուին հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուները, նախակրթական եւ երկրորդական ուսմանց ու գիտութեանց հետ, խնամնալ ազգային գաստիարակութեան մը հիման վրայ :

### ՏՈՐԹ, Ն, Պ, ՔԷԶԷՃԵԱՆ

Բժիշկ-վիրաբոյժ վկայեալ յՊ.մերիկա ժամանակիս նորադոյն մէթոսներու համաձայն կը բուժէ ներքին եւ արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ :  
Իր պաշտօնատեղին, որ կը գտնուի Շարժ Ապտ-իւլ-Ագիգի սկիզբը, Գեղարան Օսմանիյէի դիմացի ստապին շէն ին մէջ, հիւանդներ կ'ընդունուին ամեն օր առաւօտեան ժամը 10—12 եւ կէսօրէ վերջ ժամը 3—5 (բ. է.) :

Աղքատ հիւանդներ ձրի կը դարմանուին :

### ՇԱՆՈՒՑՈՒՄ

#### ԳԻՐԳ ԴԻՉՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի եւ շրջակայից գրասէլ հայ հասարակութեան գիւրութիւն մը ստոր մտօք կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Իսլամական, Գրոցական, Փիստիկան Իրական, Արուեստական, Բանասիրական, Վիպական եւլն.) որ հրատարակուած են եւ կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ, Վիեննա, Կարելիէ գիրքամատչելի են անոնց ձեռք բերելու գիմարով խառն սարդիանի :

### ԴԵՂԱՐԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Շարժ Մ Օհանէս-Ալի Պագարին դիմացը

Սաչատուրեանի եղբարց սոյն հաստատութեան մէջ իննամով կը պատրաստուին ամեն տեսակ զեղրէք չափաւոր գներով ու կը կատարուին հայ մասնագէտ բժիշկներու խորհրդակցութիւններ :

ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՍՏՈՒՆ  
Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ  
ԳՂԶԻՔԷ, Շարժ Մ Օհանէս-Ալի (Հայադպանիկ).  
Կը սպորին ամեն յեզուն գրիտ, յայտարարուի յիսններ, Խարտանիքի Խախիւագրեր, շրջաբերակականեր, մանագրեր, Եանձակագրիկ, անգլիցոյրներ, այցեսմաներ, Խաշուեցոյցեր, Կանոնագրեր, ստացագրեր երկն, երկն :  
ԽԻՍՏ ՍԱԲՈՒՐ ԵՒ ԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ